

ԹԻՔ ԹՈՔԸ ԱՐԳԻԼՈՒԵՑԱԿ

Միացեալ Թագաւորութեան խորհրդարանը կայացուց որոշում մը, ըստ որուն, պիտի արգիլուի Չինաստանի արտադրած «Թիք Թոք» ծրագիրը օգտագործել խորհրդարանի անդամներուն եւ պաշտօնէտներուն կողմէ: Ընկերութեան չինացի տնօրէնը հարցաքննութեան կ'ենթարկուի ԱՄՆ-ի գոնկրէսին կողմէ, Չինաստանի կառավարութեան հետ ունեցած իր կապին համար:



ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԵԼԵԻՄՏԱԿԱՆ ԶՆՆԱՐԿՈՒՄ

Լիբանանեան «Էլ.Պի.Սի.» պատկերասփիւռի կայանը յայտարարեց, թէ կառավարութեան յաջորդ ժողովը կը նախատեսուի գումարել Երկուշաբթի օր: Անոր օրակարգը պիտի ուղարկեն գալիք ժամերուն: Ըստ աղբիւրին,



միակ օրակարգը պիտի ըլլայ երկրի ելեւմտական վիճակի քննարկումը, լսելէ ետք նախարարին զեկոյցը: Նախարարները պիտի քննարկեն ելեւմտական ծանր վիճակին ազդեցութիւնը պետական պաշտօնէտներու թոշակին եւ աշխատավարձին վրայ:

ԱՐԺՈՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԻՄՆԱԴՐԱՍԻ ՊԱՅԱՆՋՔԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Արժոյթի միջազգային հիմնադրամը (IMF) յայտարարեց, թէ Լիբանան կը գտնուի դրամական վտանգաւոր վիճակի մէջ: Բարեկարգումը շատ դանդաղ ձեւով կ'ընթանայ: Զիմնադրամի տնօրէնութիւնը կը սպասէր, որ Լիբանանի կառավարութիւնը աւելի արագ քայլեր առնէր երկրին տնտեսական վիճակը բարելաւելու համար: Դրամագլուխի հոսքի կամ «քափիթալ քոնթրոլ»ի օրինագիծը պէտք ունի բարեփոխումի՝ ծառայելու համար իր նպատակին:

Ըստ հիմնադրամի տնօրէնին, Լիբանան պէտք է կա-

տար պէտք եղած բարեփոխումները՝ հիմնադրամէն ստանալու համար առաջին վարկը: Ան կառավարութեան



կող ուղղեց յայտնետել գումար չուզելու Կեդրոնական դրամատունէն:

ԲԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Լիբանանեան բանակի տեղեկատուական գրասենեակը յայտարարեց, թէ Խալտի շրջանին մէջ գործողութեան



մը ընթացքին ազատագրած է պատանդ մը եւ զայն առեւանգող հինգ քաղաքացիներ: Զրեական գործ բացուեցաւ այս առեւանգումին ծալքերը բացայայտելու համար:

ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, թէ Ատրպէյճանի հետ խաղաղութեան համաձայնագիրը պիտի ստորագրուի: Անոր



հիմք պիտի ծառայեն երկու կողմերու յայտարարութիւններուն բովանդակութիւնը: Նոր լարուածութիւն պիտի չըլլայ եւ արտաքին ուժեր պիտի օժանդակեն այս հիւլովոյթի յաջողութեան:

ՉԻՆԱԴՐԱՐԻ ԽԱՆՏՈՒՄ

Արցախի մէջ ծառայող ռուս խաղաղապահ ուժեր յայտարարած են, թէ Շուշի քաղաքին մօտակայքը զինադարի խախտում տեղի ունեցած է: Ըննութիւն բացուած է այս խախտումին աղբիւրը գտնելու համար:



Մարդասիրական բեռներ տեղափոխուած են Արցախ, անցնելով Լաչինի փակուած միջանցքէ: Ռուսական ուժեր նաեւ կը կատարեն ականազերծում Արցախի մէջ: Մէկ օրուան մէջ 0.5 հեկտար հողամաս ականազերծուած է: 2020-էն ի վեր ռուսական ուժեր ականազերծած են 2521.5 հեկտար հողամաս: Ռուս խաղաղապահներու ապահովութեան համար, շտաբը միշտ կը համագործակցի Հայաստանի եւ Ատրպէյճանի զինեալ ուժերու ընդհանուր հրամանատարութեան հետ:

Ֆրանսայի մայրաքաղաք Փարիզի մէջ ցուցարարներ, որոնք կը բողոքեն նախագահ Էմանուէլ Մաքրոնի առաջարկած՝ թոշակի անցնելու տարիքը 62-էն 64-ի բարձրացնելուն դէմ, բախում ունեցան ոստիկանական ուժերուն հետ: Օրինագիծը վաւերացուած էր Ծերակոյտին կողմէ եւ նախագահը խուսափած էր զայն խորհրդարանի քուէին դնելէ, սահմանադրութեան յօդուածի մը համաձայն: Նախագահը օրէնքը պիտի սկսի գործադրել տարեվերջէն ետք:

ՉՈՂ ՄԸ ՊԱՂԵՍԻՆԻ ՄԵՋ

Պաղեստինեան իշխանութեան Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ գրաւեալ Արեւմտ-



եան Ափի Թուլքարմ քաղաքին մէջ 25 տարեկան պաղեստինցի երիտասարդ մը սպանուած է խրալէեան բանակին կողմէ: Չոհր գլուխէն եւ մարմնի տարբեր մասերէն փամփուռներ ստացած է: Խրալէեան ուժեր մտած էին Թուլքարմ եւ շրջապատած էին երիտասարդին բնակարանը ու կրակած էին անոր ուղղութեամբ:

ԱՐԲԱՆԵԱԿ ՄԸ ԱՐՁԱԿՈՒԱԾ

Ռուսիոյ Դաշնութեան Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ զինուորական արբանեակ մը

ՄԵՏՎԵՏԵԻ.

ՓՈՒԹԻՆԻ ՀԱՆԴԵՊ ԶԵՐԲԱՎԱԼՈՒՄԻ ՈՐԵԷ ԳՈՐԶ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ՊԱՏԵՐԱԶՄ ՌՈՒՍԻՈՅ ԴԵՄ

Ռուսիոյ Դաշնութեան Ապահովութեան խորհուրդի փոխնախագահ Տմիթրի Մետվետեւ յայտարարեց, թէ երկրի նախագահ Վլադիմիր Փութինի հանդէպ ձեռքարկումի որեւէ փորձ կը նշանակէ պատերազմ յայտարարել Ռուս-



իոյ դէմ: Ան աւելցուց, որ Միջազգային քրեական դատարանը իրական կառոյց մըն է, որ արժէք չունի: Ան կարելոր գործ չէ կատարած եւ մեծ պետութիւններ, ինչպէս՝ Չինաստան, ԱՄՆ եւ Ռուսիա, չեն ճանչնար զայն:

Մետվետեւ աւելցուց, որ Ռուսիոյ յարաբերութիւնը Արեւմուտքի հետ իր ամենացած մակարդակին վրայ է: Օրէ օր կը մօտենանք վտանգաւոր կացութեան մը, ուր Ուքրանիոյ զէնք կը մատակարարեն միւսերէն որ հասնինք հիւլէական կործանումի: Արեւմուտքի ծրագիրը Ռուսիան փոքր պետութիւններու բաժնէն է, դիւրացնելու համար անոր բնական պաշարներու կողոպուտը:

ՆԵԹԱՆԻԱՅՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ



Իսրայէլի խորհրդարանը երկրորդ եւ երրորդ ընթերցումով վաւերացուց օրինագիծ մը, որ կը պաշտպանէ վարչապետը հրաժարեցումէ: Այսինքն, դատական մարմիններ պիտունք պիտի չունենան հրաժարեցնելու երկրին գործող վարչապետը որեւէ ամբաստանութեան համար:

Այս օրէնքը կը պաշտպանէ Նեթանիահուն, որ քանի մը օրինազանցութիւններու համար կը դատուէր նախորդ կառավարութեան իշխանութեան ժամանակ: Փտածութիւնը եւ պաշտօնի չարաշահումը այդ ամբաստանութիւններն էին: Օրինագիծը վաւերացուեցաւ 61 թեր ու 47 դէմ քուէներով:

Միւս կողմէ, պաշտպանութեան նախարար Եոպ Կալանթ Իրաւիւրեցաւ վարչապետին գրասենեակը այն լուրէն ետք, թէ ան ճշշում կը բանեցնէ Նեթանիահունի կառավարութեան առաջարկած դատական իշխանութեան սահմանափակումի օրինագիծին վաւերացումը արգիլելու համար: Կալանթ անդամ է Նեթանիահունի գլխաւորած «Լիքուտ» կուսակցութեան: Հարկ է նշել, որ այս բարեփոխումի օրինագիծը մեծ աղմուկ բարձրացուցած էր երկրին մէջ եւ ամիսներէ ի վեր հազարաւոր ցուցարարներ կը պահանջէն անոր չեղեալ համարումը:

ՍՈՒՐԻԱ ԵՒ ՍԵՆՏՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ՊԻՏԻ ԿԵՐԱԲԱՆԱՆ ԴԵՄՊՆԱՏՈՒՆԵՐԸ

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը յայտարարեց, թէ Սուրիա եւ Սեւուական Արաքիա որոշած են վերաբա-



նալ իրենց դեսպանատունները երկու երկիրներուն մէջ: Սեւուական Արաքիա փակած էր իր դեսպանատունը Դամասկոսի մէջ տասը տարի առաջ, երբ սկսած էր քաղաքացիական պատերազմը Սուրիոյ մէջ:

ԲԱՆՈՒՄ ՓԱՐԻՉԻ ՄԵՋ



ԱՆՍՏՐՈՆԻ ՉԵՍՓԻՆՆԵՐ ԿԻՆԵՐՈՒ ԿՐԻՍՏՈՒՄ ԵՐՈՊԱՅԻՆ ԳՐԻՍՏՈՒՄ

ԿԻՆԵՐՈՒ ՉԵՍՓԻՆՆԵՐ ԼԻԿԻ 1/4-ՐԴ ՄԱՐՏ. ԵՐՈՊԱՅԻՆ ԳՐԻՍՏՈՒՄ ԵՐՈՊԱՅԻՆ ՉԵՍՓԻՆՆԵՐ ԿԻՆԵՐՈՒ ԿՐԻՍՏՈՒՄ

Չորեքշաբթի երեկոյան շարունակուեցան Երոպայի կիներու ֆուտբոլի աշխարհային առաջնակարգ մրցաշարի Գրիստոյի Լիգի քառորդ աւարտական հանգրուանի երթի մրցումները: Այս հանգրուանի երրորդ մրցումին, Ֆրանսայի «Օլիմպիկ Լիոնե»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ Անգլիոյ «Չելսի»-ի դէմ ու պարտութիւն կրեց միակ կողմով:



Յամառ պայքարով յատկանշուած մրցումին միակ կողմ նշանակեց Նորվեգիացի կիսապաշտպան Ռեյնոլտ, 28-րդ վայրկեանին, սկզբնական կիսապաշտպան Զարայրի փոխանցումէն օգտուելով: Օրուան երկրորդ մրցումին, Ֆրանսայի «Փարի Սէն Ժերմէն» իր դաշտին վրայ մրցեցաւ Գերմանիոյ «Վոլֆսպուլեր»-ին դէմ ու զիջեցաւ միակ կողմով: Գերմանացի կիսապաշտպան մրցումին միակ կողմ նշանակեց իտալացի պաշտպան Եանսոն, տուգանային հարածով, 62-րդ վայրկեանին, օգտուելով Ֆրանսացի պաշտպան Տէ Ալմէյտայի սխալէն տուգանային հրապարակին մէջ: Տէ Ալմէյտա ստացաւ իր երկրորդ դեղին քարտը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

ՄԱՍՏՐՈՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՍԱԼՅՊՈՒՐԿ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Աւստրիոյ ֆուտբոլի ախոյեանութեան առաջին փուլի վերջին՝ 22-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Սալցպուրկ» իր դաշտին վրայ մրցեցաւ 12-րդ դիրքը գրաւող «Ռայնտորֆ Ալթա»-ի դէմ ու մրցումը աւարտեցաւ հաւասարութեամբ: Մրցումի 55-րդ վայրկեանին, քրոնիկոյ յարձակող Նուիլոյ յաճախ տարաւ «Ռայնտորֆ»ը: Սակայն, սլովէն յարձակող Շեքո իւր արձուգումով 1-1, փոխարինող գոլիչերիցի յարձակող Օքսֆորդի փոխանցումով: Առաջին վեց դիրքերը գրաւող խումբերը անցան ախոյեանութեան Բ. փուլ, մինչ վերջին 6 դիրքերը գրաւող խումբերը պիտի մրցին խուսափելու համար Ա. դասակարգին հրաժեշտ տալ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սալցպուրկ - Ռայնտորֆ Ալթա 1-1
- ՎՍԺ Թիրոլ - Շթուրմ Կրաց 0-2
- Զարայրկ - ԼԱՍԶ Լինց 2-2
- Աւստրիա Վիեննա - Ռափիտ Վիեննա 2-0
- Դասաւորում. 1)Սալցպուրկ 55 կէտ 49-13, 2) Շթուրմ Կրաց 48 կէտ 37-15, 3) ԼԱՍԶ Լինց 38 կէտ 38-28, 4) Ռափիտ Վիեննա 33 կէտ 34-26, 5) Աւստրիա Վիեննա 32 կէտ 37-31:

ԱՅՍՏՐՈՒՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԽՍԲ.Ա.ԳՆԱԳՐՈՒՄ

- 19:00 Նիւկարիա (71) - Սոնթեյնկոյ (69)
- 21:45 Ֆրանսա (3) - Զոլանտա (6)
- 21:45 Ժիլայրաթար (200) - Յունաստան (51)
- 21:45 Չեխիա (38) - Լեհաստան (22)
- 21:45 Նիդերլանդ (174) - Ֆարո Կղզիներ (123)
- 21:45 Շուէտ (23) - Պէլճիցա (4)
- 21:45 Աւստրիա (34) - Ատրպէյճան (121)
- 21:45 Սերպիա (29) - Լիթուանիա (144)
- ՔՈՆՍԱԶԱԿՆԻ ԱՉԳԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ 5-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
- 02:00 Կրեմատա (3) - ԱՄՆ (2)
- 04:00 Պելիզ (4) - Կուսթէմալա (2)
- ԱՓՐԻԿԵՒ ԱՉԳԵՐՈՒ ԲԱՍՄԱԿԻ ԽՍԲ.3-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
- 15:00 Դեմ.Զոնկո (4) - Մալիա (1)
- 16:00 Ուկրաինա (4) - Թանզանիա (3)
- 18:00 Նիկերիա (1) - Կիլիան-Պիսսաու (2)
- 18:00 Փոլսկրեայ Ափունք (1) - Զոմբո (3)
- 18:00 Զար.Ափրիկէ (2) - Լիպերիա (3)
- 21:00 Եգիպտոս (4) - Մալաուի (2)
- 21:00 Պուրթիկա Ֆասո (1) - Թոկո (4)
- 21:00 Մալի (1) - Կամպիա (3)
- 21:00 Սենեգալ (1) - Մոզամբիք (2)
- 22:30 Զամբուի (1) - Լամբիա (3)
- 22:30 Թունիս (1) - Լիպիա (3)
- ՊԱՍԵՆՏՐՈՆԻ ԵՆ.ՊԻ.ԷՅ.Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ**
- 01:00 Պոսթըն Սելթիքս (2) - Ինտիանա Փէյսըրզ (11)
- 04:00 Կոլտըն Սթըյո Ուորիըրզ (6) - Ֆիլատելֆիա 76-րդ (3)
- ՊԱՍԵՆՏՐՈՆԻ ԵՆ.ՊԻ.ԷՅ.Ի 30-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
- 19:45 Յրվենա Չվեգուա (14) - Պասընիա Վիթորիա (8)
- 20:00 Վիթորիա Պոլտիա (13) - Ռեալ Մատրիտ (2)
- 20:00 ԱՍ Մոնաքո (4) - Վալենսիա Պասքէթ (10)
- 21:00 Փարիզիան Պելկրատ (7) - Օլիմպիկոս Փիթոս (1)
- 22:00 Արմանի Միլան (12) - Պայըրն Միլնիի (15)
- ՊԱՍԵՆՏՐՈՆԻ ԼԻԿԱՆԱՆԻ 21-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
- 16:45 Լիտուան (5) - Անդրապիկ (9)
- ԹԵՆԻՍԻ ՄԱՅԱՍԻՒ ՄԱՍՏՐՈՒՄ 1/8-ՐԴ ՄԱՐՏ.**
- 01:00-Են սկսեալ, «Beinsports» կայանէն
- ՅԵՏԵԼԱՐՇԱՒ**
- 13:25 VOLTA A CATALUNYA, «eurosport» կայ.
- ԱՅՏՐՈՒՆ ԱՆՈՅԵԱՆ ԿՐԻՍՏՈՒՄ**
- 11:00 Նորտիք քումպիլեի Լաիթի մրցում, «eurosport»ԷՆ
- 15:20 Դահուկարշափ Լաիթի մրցում, «eurosport»ԷՆ
- 18:00 Դահուկարշափ Լաիթի մրցում, «eurosport»ԷՆ

ՃԱՏՐԱԿ ԵՐՈՊԱՅԻՆ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՉԱՏԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐՏՉԵԱՆ՝ 5-ՐԴ, ԴԱՆԻԷԼԵԱՆ՝ 8-ՐԴ

Սոնթեյնկոյի ճատրակի աշխարհային առաջնակարգ մրցաշարի Գրիստոյի Լիգի քառորդ աւարտական հանգրուանի երթի մրցումները: Այս հանգրուանի երրորդ մրցումին, Ֆրանսայի «Օլիմպիկ Լիոնե»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ Անգլիոյ «Չելսի»-ի դէմ ու պարտութիւն կրեց միակ կողմով:



- Էլիսա Դանիելեան (Ֆայ.) - Կովիար Պէյտուլլայեա (Ատր.) 0.5-0.5
- Տիւրա Վակըր (Գեր.) - Լիլիթ Սկրտչեան (Ֆայ.) 0.5-0.5
- Աննա Քուպիցեա (Լեհ.) - Աննա Սարգսեան (Ֆայ.) 0.5-0.5
- Մարիամ Սկրտչեան (Ֆայ.) - Միհայէլա Սանտու (Ռում.) 1-0
- Փոլիսա Քուպը (Ֆայ.) - Սոնթա Ռուիզ (Սպ.) 1-0
- Ռամոնա Քուպը (Լաթ.) - Սուսաննա Կապոյեան (Ֆայ.) 1-0
- Դասաւորում.1)Օ.Քիլպասա-Լեհ. 4.5 կէտ / յաւելեալ ցուցանիշ. 14, 2)Ի.Պուլմակա-Ռում. 4.5 կէտ / 13, 3)Կ.Պէյտուլլայեա-Ատր. 4.0 կէտ / 14.5, 5)Լ.Սկրտչեան-Ֆայ. 4.0 կէտ / 13.5, 8)Է.Դանիելեան-Ֆայ. 4.0 կէտ / 12, 30)Մ.Սկրտչեան-Ֆայ. 3.5 կէտ / 11, 39)Փ.Քուպը-Ֆայ. 3.0 կէտ / 12.5, 51)Ս.Սարգսեան-Ֆայ. 3.0 կէտ / 10.5, 80) Ս.Կապոյեան-Ֆայ. 2.0 կէտ / 14

ԱՅՏՐՈՒՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՕՊԸՐԿ, ՊԵՕ ԵՒ ՍԱՍՈՒԷԼՍՈՆ ՅԱՂԹԵՑԻՆ

Գերմանիոյ Օպերիոֆ քաղաքին մէջ տեղի ունեցան պիստոլի 2023 տարուան Աշխարհի ախոյեանութեան մրցումները: Արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.



- 20 քմ. անհատական տղաք.
- 1)Շուէտ Պեո-Նոր. 49:57.5 վրկ. 2) Շթուրմ Լեկրէյտ-Նոր. +1:10.7 վրկ.ուշ, 3)Սեպասթիան Սամուէլսոն-Շուէտ +1:11.1 վրկ. ուշ:
- 15 քմ. անհատական կիներ.
- 1)Ֆրանսա Եօպըրկ-Շուէտ 43:36.1 վրկ. 2)Լիս Փերսոն-Շուէտ +10.3 երկվ.ուշ, 3)Լիզա Վիթթըր-Իտ. +28.0 երկվ. ուշ 6 + 7.5 քիլոմէթր խառն դրոշարշաւ.
- 1)Օլգաի/Պեո-Նոր. 35:37.1 վրկ. 2)Քոմար/Յուրուգըր-Աւստ. +13.8 երկվ.ուշ, 3)Վիթթըր/Ճիպըմէլ-Իտ. +51.0 երկվ.ուշ 4 x 7.5 քիլոմէթր դրոշարշաւ տղաք.
- 1)Ֆրանսա 1:21:48.8 ժամ, 2)Նորվեգիա +38.8 երկվ.ուշ, 3)Շուէտ +1:39.9 վրկ.ուշ
- 4 x 6 քիլոմէթր դրոշարշաւ կիներ.
- 1)Իտալիա 1:14:39.7 ժամ, 2)Գերմանիա +24.7 երկվ.ուշ, 3)Շուէտ +55.7 երկվ.ուշ
- 15 քմ. Ընդհանուր մրցում տղաք.
- 1) Սեպասթիան Սամուէլսոն-Շուէտ 36:42.8 վրկ. 2) Մարթին Փոնսիլիոմա-Շուէտ +9.6 երկվ.ուշ, 3)Շուէտ Պեո-Նոր. +38.8 երկվ. ուշ:
- 12.5 քմ. Ընդհանուր մրցում կիներ.
- 1)Ֆրանսա Եօպըրկ-Շուէտ 36:48.0 վրկ. 2)Ինկրիտ Թանտրէվոլտ-Նոր. +4.8 երկվ.ուշ, 3)Ժիլիա Սիմոն-Ֆր. +20.8 երկվ. ուշ:

ԱՆՔԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ

Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կիրակի, 26 Մարտ 2023-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Անթիլիասի Ուխտի Օրուան առիթով, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի մատուցուի Ս. Եւ Աննաի Պատարագ:

Պիտի պատարագ ու քարոզէ ԳԵՐՇ. Տ. ՄՈՒՇԵՂ ԱՐԸ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ս. Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ, մեր հաւատքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Ազով. տեղի պիտի ունենայ աւանդական թափօր եւ պիտի կատարուի ջրօրինք: Եկեղեցական արարողութեան աւարտին, Ս. Ազով պիտի տեղադրուի Ս. Խորանի բեմին վրայ եւ հոն պիտի մնայ մինչեւ երեկոյան ժամը 7:00: Հաւատացեալներ հերթաբար մօտենալով պիտի կարողանան ստանալ Ս. Լուսաւորիչ Հայրապետին Ազին օրհնութիւնը եւ օրհնուած ջուր: Նշենք, որ Շաբաթ, 25 Մարտ 2023-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Մուտն ի Վիրապ յիշատակութեան առթիւ Ս. Եւ Աննաի Պատարագ պիտի մատուցուի Կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ, իսկ երեկոյեան ժամը 7:00-ին, Անթիլիասի Ուխտի Օրուան առիթով պիտի կատարուի հսկումի արարողութիւն՝ նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ միաբան հայրերու եւ Դպրեվանքի ուսանողներու: **ՏԱՍՕԹ.** Կիրակի օր ժամը 10:00-ին, փոխադրակազմեր տրամադրուած պիտի ըլլան հետեւեալ վայրերէն՝

- 1) Սրբոց Վարդանանց եկեղեցի, Պուրճ Յամուտ
- 2) ԲԱՂԼԻ Ազգ. Շերանոց, Պուրճ Յամուտ
- 3) Ս. Ազնե Վարժարան, Պուրճ Յամուտ
- 4) Պանք աֆ Պէյրութ, Յաճըն
- 5) Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի, Յայաշէն
- 6) Ս. Երրորդութիւն մատուռ, Ֆանար

ԴԻՆԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Մ Ա Ն Ա Զ Դ

- Տիկին Սոնա Թապագեան (ԱՄՆ)
- Տիկին Չապէլ Թապագեան (ԱՄՆ)
- Տէր եւ տիկին Վարանդ եւ Սիւզի Թապագեան եւ գաւակունք (ԱՄՆ)
- Տէր եւ տիկին Պատրիկ եւ Շողեր Զոփուշեան եւ գաւակունք (ԱՄՆ)
- Տէր եւ տիկին Արտեմ եւ Անի Թապագեան եւ գաւակունք (ԱՄՆ)
- Տիկին Սարո Արսլանեան եւ գաւակունք (Քանադա)
- Տիկին Մարո Արսլանեան Բագարեան եւ գաւակունք (ԱՄՆ)
- Տիկին Ազո Արսլանեան եւ գաւակունք (Շաբաթ)
- Տիկին Կարո Արսլանեան, Կանիմեան, Տիկին Կարո, Ազընեան, Զինչիսեան, Ուրախեան, Մազլումեան, Գերգեան, Պատարագի ընտանիքներ եւ ազգականներ կը գումարեն իրենց հարազատին՝

ՕՐԴ. ԼՈՒՍԻՆ ԹԱՊԱԳԵԱՆԻ (1934-2023)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 22 Մարտ 2023-ին: Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 25 Մարտ 2023, կէսօրուան ժամը 1:00-ին, հալիլ Պատարագի Սրբ. Յարութեան եկեղեցոյ մէջ, Ռըմէյլ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Յամուտի Ազգ. գերեզմանատունը: Ներկայս ընդունիլ իրելու մահազգ: Յաւակցութիւնները պիտի ընդունուին թաղման արարողութենէն ետք, Սրբ. Յարութեան եկեղեցոյ սրահին մէջ, մինչեւ երեկոյեան ժամը 7:00: Փոխան ծաղկեպսակի, նուիրատուութիւնները կատարել Սրբ. Յարութեան եկեղեցոյ:



ARARAD DAILY NEWSPAPER
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
 Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
 email: araradorartert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المديرية المسؤولة: أني صرافيان | تصدر عن شركة مسيسر للمباعة والنشر (ش.م.م.)

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լիբանանի Կրթական Ցանձնախումբը
 ԵՒ
ՀԲԸՄ-ի Լիբանանի Վարժարաններու Տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը

սրտի խոր կսկիծով կը գումարեն

ՀԲԸՄ-ի Լեւոն Կ. Նազարեան Վարժարանի վաստակաշատ դաստիարակ եւ նուիրեալ ուսուցչուհի՝

Օրդ. Լուսին Թապագեանի

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 22 Մարտ 2023-ին: